

**ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԶԵՂԶԿԱԾ ԱՍՈՒՅԹՆԵՐՈՒՄ**

Զեղչումը, որը նախադասության սպասելի անդամի բացակայությունն է, կարևոր հաղորդակցական դեր է կատարում խոսքային գործունեության ընթացքում: Այն թեթևացնում է խոսողի արտաբերական ջանքերը, կանխում անհարկի կրկնությունը՝ ասույթին հաղորդելով արտասանական դյուրիմություն և սահունություն: Լեզվաբանության մեջ զեղչման մի տեսակ է համարվում մաև համառոտությունը, երբ խոսողը խուսափում է հենց նոր հիշատակված բառը, ձևը կրկնելուց և արտահայտության հնարավոր կառույցներից նախընտրում է համառոտը:

Ինչպես ընդունված է տեքստի լեզվաբանության մեջ, զեղչումը հատկապես բնորոշ է բանավոր խոսքին՝ իրար հաջորդող փոխկապակցված ասույթների միությանը:

Նախադասության ոչ բոլոր անդամների բացակայությունն է, որ կարելի է զեղչում համարել: Այսպես, երբեմն նախադասության այս կամ այն անդամը բացակայում է, բայց խոսքային միջավայրից ու իրադրությունից գիտակցվում է, և լսողը, կարդացողը մտքով վերականգնում է բացակա բառը:

Այսպիսի «թերի» նախադասությունը պետք է տարբերակել անավարտ նախադասությունից, որում կա մտքի թերիություն: Վերջինս իմաստային առումով կիսատ է, քանի որ պարունակում է թերի քերականական կառույց՝ անավարտ բառաշար, որի բացակա անդամները չեն կարող վերականգնվել համատեքստից: Անավարտ, ընդհատված հաղորդակցական կառույցը՝ թերի նախադասությունը, չի կարող լիարժեք հաղորդակցական դեր կատարել:

Թերի նախադասությունները հաճախ են հանդիպում առօրյա բանավոր գրույցի ընթացքում, երբ խոսողին ընդհատում են խոսելու պահին՝ ասույթը թողնելով անավարտ, կամ էլ հանգամանքների բերումով մա ինքն է խոսքը թողնում կիսատ: Այսպիսով, քանի որ թերի տերմինով հնարավոր չէ տարբերակել մտքի և կառուցվածքի անավարտությունը, մենք նպատակահարմար ենք համարում կազմությամբ թերի, բայց իմաստով ամբողջական նախադասությունը կոչել զեղչված նախադասություն:

Այսպիսով, մենք համամիտ ենք այն հեղինակների հետ, ովքեր որպես զեղչում ընդունում են այն անդամի բացակայությունը, որի առկայությունը

տվյալ կառույցում ակնկալելի է, պարտադիր, և առանց այդ անդամի տվյալ ասույթի կազմը թերի է դառնում¹:

Ինչպես արդեն ասացինք, քերականական տեսակետից թերի համարվող զեղչյալ նախադասությունն իմաստային առումով ամբողջական է և կապակցված խոսքում անթերի է կատարում իր հաղորդակցական դերը: Թերի լինելը վերաբերում է ոչ թե նախադասության բովանդակությանը, այլ նրա կազմին. շարակարգային կառուցվածքից բացակայում են նախադասության անդամներ, որոնց տեղը մնում է թափուր: Սակայն մտքի տեսակետից այդ տեղերը թափուր չեն մնում, այլ լրացվում են, վերականգնվում նախորդ համատեքստից:

Ձեղչումը երբեմն մեծ չափերի է հասնում, և զեղչված անդամներով նախադասությունը կորցնում է իր սովորական կառուցվածքային պատկերը: Նախադասության անդամը կարող է հասկանալի լինել ու զեղչվել, երբ գործածվում է կից կամ մոտիկ նախադասությունների մեջ կամ էլ հասկացվում է համատեքստից:

Գործաբանական լեզվաբանության տեսանկյունից դիտարկելիս զեղչումը կարելի է մեկնաբանել որպես խոսքային ներակայման ձևերից մեկը: «Ներակայում» տերմինը ներմուծել է Գրայսը, որով նա նշում է այն, ինչ խոսողը կարող է ենթադրել, ակնարկել կամ հուշել իր ասածին հակառակ, կամ էլ ի լրացում իր ասածի:

Գոյություն ունեն խոսակցական ներակայումներ, որոնք, ըստ Գրայսի, որոշակի են դառնում բառիմաստի խաղի միջոցով:

Խոսակցական ներակայումը հիմնվում է հաղորդակցման ընդհանուր սկզբունքի և մի շարք կարգախոսների վրա, որոնցից խոսողներն օգտվում են: Այդ ընդհանուր սկզբունքը կոչվում է համատեղ հաղորդակցման սկզբունք, որը Գրայսը ձևակերպում է հետևյալ կերպ. «Խոսակցությունը տար այն ուղիով, որը պահանջվում է, այն մակարդակում, որում այն իրականանում է, փոխադարձ հաղորդակցման համար ընդունված նպատակով կամ հաղորդակցական ուղղությամբ, որում դու ներգրավված ես»²:

Երկխոսությունը ոչ թե անկապ դատողությունների շարան է, այլ փոխկապակցված աշխատանքի արդյունք, որտեղ հաղորդակցական երկու կողմերն էլ համատեղ ջանքեր են գործադրում ինչ-որ նպատակի հասնելու համար:

¹ Գյուլբուդաղյան Ս. «Ժամանակակից հայերենի շարահյուսություն», Երևան, 1987, էջ 98, 212:

² Grice H. P. Logic and Conversation // Pragmatics / Ed. S. Devis – New York, Oxford University Press, 1991, p. 307.

խոսակցական կարգախոսները դասակարգվում են չորս խմբերի և համապատասխան ենթախմբերի: Դրանք են քանակի, որակի, տեղի ունեցման և ձևի կարգախոսները:

Անհայտ է, որ որոշ կարգախոսների պահպանումը պակաս կարևորություն ունի հաղորդակցման ընթացքում, քան մյուսներինը:

Գոյություն ունեն, անշուշտ, կարգախոսների այլ տեսակներ ևս՝ գեղագիտական, հասարակական կամ բարոյական բնույթի, օրինակ՝ «Եղի՛ր քաղաքավարի»: Զրուցակիցները հաշվի են առնում նաև այս կարգախոսը:

Հաղորդակցման ընթացքում խոսակցական կարգախոսները և խոսակցական ներակայումները փոխկապակցված են: Եթե կա հաղորդակցական նպատակ, ապա կարգախոսները տեղեկատվությամբ փոխանակման առավել էֆեկտիվ միջոցն են դառնում:

Այս հոդվածի նպատակն է լուսաբանել Փ. Գրայսի կարգախոսների հաղորդակցական դերը հարց ու պատասխանի գործառույթ կատարող զեղչված ասույթներում: Հարցի մեջ զեղչում կատարելով խոսողը շեշտում է հարցադրումը, առավել ակնառու է դարձնում իրեն հետաքրքրող խնդիրները: Պատասխանողի նպատակն է հնարավորին չափ հստակ պարզաբանել անճշտությունները, տալ պահանջվող տեղեկատվությունը՝ առանց ավելորդությունների:

Վ. Յամմյուների տեսանկյունից յուրաքանչյուր ասույթ հաղորդակցման ընթացքում որոշակի ռազմավարության արդյունք է³:

Բնական է, որ ռազմավարության ընտրությունը և իրականացումը կախված է հաղորդակցվողների ծանոթության աստիճանից, սոցիալական պատճառից, անձի հոգեբանական տիպից: Անձանց փոխգործունեության հիմք են հանդիսանում սոցիալական դրույթների նույնությունը, կոնկրետ իրադրություններում հետաքրքրությունների համընկնումը, հանգամանքների բերումը:

Հաղորդակցական գործընթացը գիտակցաբար կանոնակարգվում է մասնակիցների կողմից, քանի որ նրանց ռազմավարությունն ու մարտավարությունը փոփոխվում է զրույցի ընթացքում կախված հաղորդակցական իրադրությունից⁴:

Առարկայական աշխարհի իմացությունը, տեղեկատվության տրամաբանական հաջորդականությունը, նորմերի և գնահատումների ընդհանրությունը, որը գոյություն ունի կոնկրետ համայնքի հասարակական գիտակցության մեջ, նպաստում է ռազմավարության կիրառմանը:

³ Zammuner V. Speech Production: Strategies in Discourse Planning. - Hamburg. 1981, p. 257.

⁴ Паронян Ш. Конашенин и правила речевого общения. Ереван, Кантех- сб. науч. тр. 2001, кн. 4, стр. 95.

Հաղորդակցության ընթացքում երկխոսությունը կազմվում է հարց ու պատասխան ռեպլիկներից:

Հարցի մեջ կիրառվող գեղչումը հաճախ բխում է նախկինում ասվածից կամ էլ հաղորդակցական իրադրությունից:

Ձեղչված հարցական ասույթները կատարում են որոշակի խոսքային ռազմավարություն՝ արտահայտելով տարակուսանք, զարմանք, ծաղր, պնդում, խոսքի տնտեսում, ժամանակի շահում, փաստարկում, զնահատում (համակրանք, հակակրանք), ճշտում:

Երկխոսական միավորի պատասխան ռեպլիկում գեղչումը կիրառվում է հարցի մեջ եղած տեղեկատվության կրկնումից խուսափելու և ուշադրությունը մոր փաստերի վրա կենտրոնացնելու համար:

Պատասխան պարունակող հաստատական ասույթում գեղչումը հաղորդակցական ռազմավարության հետևյալ նպատակներն է հետապնդում՝ տեղեկատվություն (անորոշ, հստակ), տարակուսանք, խոսքի տնտեսում, ժամանակի շահում, փաստարկում, զնահատում (հակակրանք), հստակեցում, հաստատում, առարկություն, ճշտում:

Եկեք դիտարկենք մի քանի օրինակ: Դրանցում կարելի է տեսնել այնպիսի գեղչման դեպքեր, որոնցում օգտագործված են տարբեր նպատակներ ունեցող ռազմավարություններ, որոնք իրենց հերթին զուգակցված են Գրայսի կարգախոսների հետ:

- | | |
|------------|--|
| 1. Church: | It is a quality wine. |
| Dron: | <u>Quality wine? You think so? Quality eh?</u> |
| Church: | It's not quite so clear as the red. (P. Terson, 126) |

Վերոհիշյալ օրինակում գեղչումը դիտարկվում է հարցի մեջ: Չըրչը և Դրոնը գինի են խմում և զրուցում են դրա որակի մասին: Չըրչը Դրոնին առաջարկում է փորձել սպիտակ գինին, քանի որ այն բարձրորակ է: Դրոնը կասկածում է Չըրչի ասածի ճշմարտությանը և փորձում է ճշտել Չըրչի դատողության իսկությունը գեղչում պարունակող հարցական ասույթի օգնությամբ. "Quality wine?": Ինչպես տեսնում ենք, հարցական ասույթը պարունակում է միայն ստորոգելիական վերադիր, որն էլ Չըրչի ռեպլիկի ռեժան է՝ նորույթը, որի համար արտաբերված է հաստատական ասույթը: Դրոնը չի սահմանափակվում մեկ հարցական ասույթով: Նրա ռեպլիկը կազմված է երեք գեղչված ասույթներից: Դրոնը ցանկանում է պարզել, թե ինչից ելնելով է Չըրչը նման կարծիք հայտնում սպիտակ գինու մասին, քանի որ կասկածում է, թե վերջինս լավ է հասկանում գինիներից: Դրա համար էլ երրորդ հարցական ասույթում կրկնվում է "Quality" որոշիչը, որն էլ սաստկացնում է կասկածը: Դրոնն ուզում է անպայման պատասխան ստանալ, և նա պնդում է պատասխանի իր

ակնկալիքը “eh” վերաբերականով: Սույն ռեպլիկում խախտված է քանակի կարգախոսը: Դրոնը երեք անգամ կրկնում է հարցը՝ ավելին ասելով, քան պետք է: Այստեղ խախտված է նաև Գրայսի որակի կարգախոսը, քանի որ սպիտակ գինու որակը կասկածելու, Չըրչի կարծիքին չվստահելու համար Դրոնը բավարար հիմքեր չունի: Նրա հարցի հաղորդակցական ռազմավարության նպատակն է կասկած հայտնել նախորդ դատողության ճշտության վերաբերյալ և դրդել խոսակցին տալ հստակ պատասխան: Այսպիսով, Չըրչից պահանջվում է հիմնավորել իր կարծիքը, ցուցադրել գինիների մասին իր գիտելիքը, ինչն էլ նա անում է՝ ասելով, որ սպիտակ գինին այնքան էլ պարզ չէ, որքան կարմիրը: Սկիզբն է այն կանխադրույթը, որն էլ նրան թույլ է տալիս գերադասել սպիտակ գինին կարմիրը:

2. Second girl: What's to be scared of in seaweed?

First girl: Well, maybe-crabs-or

Second girl: Or what?

First girl: I dunno. You can't see though... (I.H.Finlay, 190)

Այս երկխոսությունը տեղի է ունենում երկու ընկերուհիների միջև: Աղջիկներից մեկը պատմում է, որ իր ընկերը երկար ժամանակ է անցկացնում ծովում, բայց մինչև ջրին հասնելը, նա քայլում է ջրիմուռների միջով: Նրա կարծիքով ջրիմուռների միջով քայլելը սարսափելի և տհաճ է: Երկրորդ աղջկա համար անհասկանալի է, թե ինչու է պետք վախենալ ջրիմուռներից: Նա հարց է տալիս, և ընկերուհին, հստակ չիմանալով պատասխանը, կանգ է առնում՝ փորձելով ինչ-որ բան վերհիշել, բառեր գտնել: Խոսքային հոսքի դադարը երկար է տևում և երկրորդ զրուցակիցը, խախտելով լռությունը, հարց է տալիս՝ փորձելով ճշտել, թե խեղճետիմներից բացի ուրիշ ինչ կարող է լինել ջրիմուռներում: “Or what?” զեղչված ասույթը պարունակում է հարցի ռեմային մասը, որը ճշտման կարիք ունի:

Հարցում խախտված է Գրայսի քանակի կարգախոսը, քանի որ խոսողը բավարար չափով բառեր չի ասում: Հարցական ասույթի ռազմավարության նպատակն է՝ ճշտել խոսողին հետաքրքրող մանրամասները:

Դիտենք մի երկխոսական միավոր, որտեղ զեղչված է պատասխանը.

3. Joan: Has something sunk through all those layers at last?

Arnie (pause): Has what sunk through which layers?

Joan: Disgust.

Arnie: You're being boring. (D. Storey. 52)

Ամուսինները վիճաբանում են, և Ջուանը, նկատելով, որ ամուսինը մտածմունքներով է տարվել, փորձում է պարզել դրա պատճառը: Սակայն նրա

հարցում պակասում է ռեմատիկ անդամը, որը փոխարինված է "something" դերանվամբ: Հարցի իմաստը կիսատ է մնում, այդ պատճառով էլ ամուսինը՝ Արնին, մի փոքր երկմտելուց հետո (ինչը ցույց է տալիս հեղինակի խոսքը դադարը), հակադարձ հարցով փորձում է պարզաբանել այն: "Has what sunk through which layers?" "What" հարցական դերանունը վերաբերում է ենթակային և պահանջում է անվանել այն, հստակեցնել: Ջուանի պատասխան ասույթը պարունակում է միայն խնդրո առարկա բառը, այն, ինչ անհասկանալի էր նախորդ ասույթում. "Disgust"-զզվանք, տհաճություն: Ինչպես տեսնում ենք, կինը չէր ուզում ավելորդ լարվածություն մտցնել իրենց փոխհարաբերություններում և փորձում էր թաքցնել իր բացասական վերաբերմունքը: Ամուսնու հաստատականությունը ստիպում է նրան բացահայտել հակակրանքն ամուսնու հանդեպ, ինչն էլ արտահայտվում է զեղչված ասույթով: Ձեռքման հաղորդակցական ռազմավարությունը բացասական գնահատականի արտահայտումն է: Սույն ասույթում խախտված է քանակի կարգախոսը, ինչպես նաև քաղաքավարության կարգախոսը, քանի որ Ջուանի վարվելակերպում կա վիրավորանք:

4. Jenny: No, I could do better, supposing I got a job!

Bernard: Oh no, oh no, not on your Eleanor.

Jenny: My what?

Bernard: Nellie. (G. Cooper, 149)

Բերնարդը կասկածում է, որ իր կինը՝ Ջեննին, իրենից գաղտնի աշխատում է և այն էլ մի տիկնոջ մոտ, որին նա տանել չի կարող, իսկ Ջեննին, ընդհակառակը, շատ է սիրում: Այդ պատճառով էլ նա այդ տիկնոջը հենց այդպես էլ անվանում է՝ "your Eleanor". "Oh no, oh no, not on your Eleanor": Ըստ որում, "Eleanor"-ն այդ տիկնոջ պաշտոնական անունն է, իսկ մտերիմները, Ջեննին, օրինակ, "Nellie" է անվանում: Կնոջ ընկերուհուն "Eleanor" անվանելով Բերնարդն արտահայտում է իր բացասական վերաբերմունքը նրա հանդեպ: Կինը, կարծես թե, չի հասկանում, թե ում մասին է խոսքը, ավելի ճիշտ՝ ձևանում է, թե չի հասկանում և փորձում է ծշտում մտցնել "My what?": Սա նաև ամուսնուն շեղելու միջոց է, քանի որ նա չի ուզում, որ ամուսինն իմանա իր աշխատանքի մասին: Բերնարդը տալիս է կարճ և հստակ պատասխան, քանի որ գիտի, որ Ջեննին կհասկանա առանց մեկնաբանությունների "Nellie": Ձեռքման ռազմավարությունը խոսքի տնտեսումն է: Այստեղ խախտված է քանակի կարգախոսը:

Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ որպես խոսքային ներակայման ձև զեղչումն ունի որոշակի հաղորդակցական գործառնություն և նպատակ է զրուցակիցների առավել արդյունավետ խոսքային փոխներգործությանը: